


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Աղջիկը, որ
երկու անգամ
ապրեցաւ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Ճայրոս հրեայ եկեղեցական
առաջնորդ մըն էր, որ Աստուծոյ
կը պաշտեր եւ
Աստուծոյ խօսքը
կը սորվեցներ
ուրիշներուն:




Օրին մեկը մեծ
փորձանք մը
եկաւ ճայրոսի:




Իր ամենասիրելի աղջիկը,
միայն տասներկու տարեկան,
հիւանդացաւ:

Այնպէս կերելէր,
թէ որեւէ մէկը չի
կրնար օգնել
անոր:



Շատ ծանր հիւանդութիւն
էր: Ծայրոս գիտէր,
որ իր աղջիկը
կը մեռներ:



Միայն մէկ անձ կրնայ օգնել
Ճայրոսի աղջիկը: Ճայրոս
փնտռտուքի ելաւ



Յիսուսին,
որպեսզի իր
տունը բերէ
զինք:



Ճայրոս թերեւս գիտէր, որ
իր եկեղեցիի մարդիկը չեն
հաւատար Յիսուսի:




Սակայն ճայրոս հոգ չէր ըներ: Ան
պետք ուներ արագ օգնութեան,
որպեսզի իր աղջիկը չմեռներ:





Ճայրոս
գտաւ
Յիսուսը
հոծ

բազուխեամբ
պաշարուած:





Ան
ծուևկի
եկաւ
Յիսուսի
ոտքերուն
առջեւ:





"Իմ
փոքրիկ
աղջիկս
մահուան
սեմին է",
յուսահատ
աղաչեց


մարդը:






"Եկուր եւ
ձեռքերդ
վրան
դիր,
որպեսզի
առողջանայ
եւ ան


ապրի":





Յիսուս գնաց
ճայրոսի հետ:
Սակայն արագ
չէին կրնար
շարժիլ հոժ
բազմութեան
պատճառով:







Կին մը տասներկու
երկար տարիներ
հիւանդ էր: Ան
այցելած էր բոլոր
բժիշկներուն
(եւ սպառած իր
բոլոր դրամը)
առանց որեւէ
օգնութեան:




Օ՛հ, որքան
կ'ուզեր
Յիսուսը
տեսնել:






Ի՞նչ
կրնար
ընել կինը: "Եթե
միայն կրնամ դպչիլ
իր հագուստին, ես
պիտի առողջանամ",
կինը մրմռաց:






Ան կամաց մը գնաց
Յիսուսին ուղղութեամբ:
Ետքը իր ձեռքը
Երկարելով դպչեցաւ
Յիսուսի վերարկուն:





Յրաշք մը:
Յրաշք մը: Կինը
առողջացաւ:
Անմիջապէս եւ
ամբողջապէս:
Ան գիտէր, որ
առողջացաւ եւ
ամբողջութեամբ:
Բայց յետոյ ձայն
մը խօսեցաւ.






"Ո՞վ դպաւ ինձի",
Յիսուս հարցուց.
Բազմութիւններ
կը դպչէին անոր:
Բայց կինը, որ
առողջացաւ
գիտէր, որ Յիսուս
կ'ուզէր, որ կինը
ըսէ, թէ ինք
առողջացաւ:



Ամչկոտուրեամբ,
կինը Յիսուսի
պատմեց բոլոր
պատմութիւնը:



Ճիշդ այդ ատեն ճայրոսի
ծառաները հասան
տունեն: Իրենց
երեսներուն վրայ
յայտնի էր:
Ցաւալի ըսին
ճայրոսի:



Մեռաւ: Շատ ուշ էր: Թերեւս եթէ
կինը չ'ուշացներ...
թերեւս, եթէ...

Մեռաւ: Ճայրոսի
թանկագին
աղջիկը գնաց:



Երբ Յիսուս իմացաւ, ան
պատասխանեց. "Մի
վախնար, միայն
հաւատայ,
եւ ինք լաւ
պիտի ըլլայ":



Ի՞նչ դժուար պիտի
ըլլար ճայրոսին,
որպէսզի
հաւատայ
Յիսուսին:
Իր աղջիկը
մեռած էր:



Տունը, ամեն մարդ կու լար
եւ կը ողբար աղջկան:



"Ան մեռած չէ, սակայն կը քնանայ",
ըսաւ Յիսուս անոնց: Անոնք իր վրայ
խնդացին: Անոնք
գիտէին,
որ աղջիկը
մեռած էր:



Յիսուս ամենուրև դուրս դրաւ,
առաւ աղջկան ձեռքը եւ
ըսաւ. "Փոքրիկ
աղջիկ, ելի՛ր":



Ճայրոս հոն էր: Իր կինն ալ
հոն էր: Յիսուսի երեք
աշակերտներն
ալ հոն էին:



Ամենքն ալ լսեցին
Յիսուսին բառերը:
Կրնա՞ր ըլլալ, որ
պզտիկ աղջիկն
ալ լսեց:



Մեռած աղջիկն
ալ լսեց
Յիսուսի
հրամանը:




Անոր հոգին վերադարձաւ, եւ ան
անմիջապէս
ոտքի
ելաւ:




Յիսուս անոր վերցուց մեռելներէն:




Աղջկան ծնողքը ապշած էր: Յիսուս
աղջկան ուտելիք տուաւ, որ ուտէ:



Ի՞նչ ուրախ պետք էր զգային,
որքան շնորհակալ Յիսուսին:



Իր հրաշալի սիրոյ եւ ուժին, որ
իրենց աղջիկը վերադարձուց
մեռելներէն:



Աղջիկը, որ երկու անգամ ապրեցաւ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մարկոս 5, Ղուկաս 8

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մաթնոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

